Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ՇՃ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 15. Շիրակի մարզ - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2024-30.09.2024թթ. |
| Ներկայացման օր | 01.10.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 100 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 50 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 15 շահառու ներգրավվել է հոգեբանական խմբային հանդիպումների:
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 41 շահառու մասնակցել է կենտրոնում գործող խմբակներին (առողջ ապրելակերպ, մամուլի ընթերցում, քննարկում, գրական, խոհարարական, հոգեբանական):
  - Ճաշարանի 38 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝ էքսկուրսիա դեպի Դիլիջան, Հաղարծին, Պարզ լիճ, Գոշավանք, Խաղողօրհնեք, էքսկուրսիա դեպի Սաղմոսավանք, Հովհաննավանք, Սեւան, Խաչվերացի տոն, Անկախության տոն, էքսկուրսիա դեպի Սառնաղբյուր, մասնակցություն մշակութային միջոցառմանը՝ նվիրված Գագիկ Մկոյանի հեղինակային համերգին, էքսկուրսիա դեպի Հառիճավանք, շահառուի ծննդյան տոնի նշում, հանդիպում քահանա Տեր Մակարի (10 անգամ) և Տեր Սողոմոնի ( 11 անգամ) հետ:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Խաղողօրհնեք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/eahqjp ),
- Հոգեբանական խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/coedfw ),
- էքսկուրսիա դեպի Դիլիջան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ohlpug ),
- էքսկուրսիա դեպի Սառնաղբյուր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/qlszvh ),
- Մշակութային միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/acfmvr ),
- Հանդիպում քահանայի հետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/jptcyo ):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում բարեգործական ճաշարանի բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելութուն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված թիմ բիլդինգին՝ ուղղված Կազմակերպության ողջ անձնակազմի թիմային ոգու բարձրացմանը, փորձի փոխանակմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | վ | 99/100 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 67 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 31 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 12 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 8 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 23 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 69 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 100 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների և ժամացի կազմակերպում | 38 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 10.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)